

ՄԱՐՏԻՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հայ-ռուսական (պլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի քրեական և քրեական
դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

ԿԱԼԱՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԷՌԽԹՅՈՒՆ ՀԱՏ ԳՈՐԾՈՂ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ կալանքը ուղղիչ իիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալն պահելու է։ Կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ժամկետության հանցանքների համար օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ տասնինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով և միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել։

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանքը չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց, հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ։

Կալանքը կիրառվում է միայն որպես իիմնական պատիժ և կարող է նշանակվել հանցագործություն կատարած անձի նկատմամբ բացառապես դատավճռով։

Կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ օրենսդրը շեշտը դնում է կալանքի չորս իիմնական տարրերի վրա։

1. կալանքը դատապարտյալ խիստ մեկուսացումն է հասարակությունից,

2. կալանքն անձին անազատության մեջ պահելու է՝ օրենքով հստակ սահմանված կարճ ժամկետով,

3. կալանքը կարող է նշանակվել միայն ոչ մեծ և միջին ժամկետության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ,

4. անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրված չպետք է լինի։

Բ.Վ. Չորրավոմիալովի կարծիքով, կալանքն իր էությամբ իրենից կարճաժամկետ ազատազրկում է ներկայացնում։ Հեղինակն իր տեսակետը իիմնավորում է առաջին հերթին այն հանգամանքով, որ կալանքի դեպքում անձը դատարանի դատավճռով դատապարտվում է հասարակությունից խիստ մեկուսացման, այսինքն՝ տեղավորվում է հատուկ հաստատություն, ուր գտնվում է մշտական հսկողության տակ, խիստ ուժիմի պայմաններում՝ իրավունք չունենալով

լրել այդ հաստատությունը մինչև դատարանի կողմից սահմանված պատժի ժամկետի ավարտը։

Բացի այդ՝ քրեական օրենքը հստակ նախանշում է կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի ժամկետային սահմանները՝ տասնինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով։ Հետևաբար կալանքի դեպքում հասարակությունից մեկուսացումը կարճաժամկետ բնույթ է կրում²։

Ո.Ռ.Գալիակբարովն ընդգծում է կալանքի հետևյալ չորս իիմնական տարրերը։

1. անձին հարկադրաբար պահելը,
2. դատապարտյալն պահելը դրա համար հատուկ նախատեսված հաստատությունում,
3. դատապարտյալն պահելը հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում,
4. անձին ազատությունից գրկելը օրենքով հստակ սահմանված՝ տասնինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով։

Հարկ է նկատել, որ հեղինակը անձին հարկադրաբար պահելը դիմարկում է որպես կալանքի առանձնահատկություն, մինչեւ հարկադրանքի տարրը բնորոշ է, ընդհանուր առմանք, քրեական պատժին և պատժի յուրաքանչյուր տեսակին, քանի որ ցանկացած պատժի կապված է անձի իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակման հետ և անխուսափելիորեն նրան որոշակի գրկանքներ է պատճառում ու սահմանափակում է նրա իրավունքներն ու անձնական ազատությունը։

Վերոգրյալի իիման վրա կալանքի՝ որպես քրեական պատժի էության տակ անհրաժեշտ է հասկանալ դատապարտյալի որոշակի իրավունքների և ազատությունների գրկման կամ սահմանափակման համակցությունը, որոնք ուղեկցվում են անձին հասարակությունից ժամանակավոր խիստ մեկուսացմամբ դրա համար հատուկ նախատեսված հատուկ տիպի քրեակատարողական հաստատությունում։

Հարկ է նշել, որ օրենսդրը գինծառայողների նկատմամբ կալանքի ձևով պատիժ նշանակելու դեպքում դրա կրման հատուկ կարգ է սահմանել։

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինծառայողները կալանքը կրում են կայազորային կարգապահական մեկուսարանում:

Կալանքի՝ որպես քրեական պատժի տարատեսակի բովանդակությունը բնութագրող վերը թվարկված իրավասահմանափակումների ցանկը, մեր կարծիքով, հանդիսանում է ոչ սպառիչ և մասամբ էլ վիճելի:

Այժմ վերլուծենք կալանքի՝ որպես քրեական պատժի բովանդակությունը:

Ինչպես արդեն նշեցինք նախորդ պարագրաֆում, մեղքի քավումը պատժի անբաժանելի մասն է կազմում ու անխուսափելիորեն ուղեկցում է նրան:

Սեղքի քավումը կալանքի դեպքում, արտահայտվում է անձի դատապարտման փաստում, որն իրականացվում է պետության կողմից:

Արդարացի է նշում Ա.Վ.Պոլիբցեվը, որ անձի իրապարակային, բացասական գնահատականը հոգեբանական ազդեցություն չի թողնում հանցագործություն կատարած անձի վրա, և պատմելով անձին, բացասական գնահատելով նրա վարքը՝ միաժամանակ բացասական ազդեցություն է թողնում նրա իրավական և սոցիալական դրության վրա:

Կալանքի՝ որպես քրեական պատժի, մեղքի քավման հաջորդ տարրը դատապարտյալի՝ հասարակությունից մեկուսացումն է, որն արտահայտվում է հասարակությունից նրա խիստ մեկուսացմամբ, որի հետևանքով անձը գրկում է մի շարք իրավունքների, պարտականությունների և օրինական շահերի իրականացումից, քանի որ խիստ մեկուսացումը որպես կալանքի, մեղքի քավման տարր, արտահայտվում է միաժամանակ անձի սահմանադրական իրավունքների սահմանափակմամբ՝ ՀՀ տարածքով ազատ տեղաշարժելու, բնակության վայր ընտրելու իրավունքից զրկելու մեջ և այլն:

Հարկ է նշել, որ «մեկուսացում» եզրույթի տակ հասկացվում է հանցավորի առանձնացումը մյուսներից, նրան շիման հնարավորությունից զրկելը՝ հեռացնելով նրան հասարակության մյուս անդամներից:

Վ.Ն.Կուլպրավցեվի կարծիքով, «մեկուսացում» հասկացության տակ պետք է հասկանալ անձին տեղափորելն այնպիսի պայմաններում, որի դեպքում նա զրկում է սովորական շփում-ներից և իր նախկին կապերից, այդ քվում՝ հասարակությունից ընդհանուր առմամբ :

Հասարակությունից մեկուսացման վերը թվարկված հասկացությունները հիմք են տալիս կալանքի դատապարտված անձանց՝ հասարակությունից խիստ մեկուսացումը դիտարկել հետևյալ տեսանկյուններից:

1. դատապարտյալի ֆիզիկական շփման գրկումը կամ սահմանափակումը նախկին սոցիալական միջավայրի հետ (ընտանիքի, մտերիմների կամ ազգականների), իրեն անձանոր անձանց հետ, որոնք գտնվում են քրեակատարողական հիմնարկից դուրս, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի սոցիալական նոր միջավայրի հետ:

2. դատապարտյալին հոգևոր կապերից գրկելը կամ այն սահմանափակելը իրեն անձանոր անձանց հետ ինչպես քրեակատարողական հիմնարկում, այնպես էլ քրեակատարողական հիմնարկից դուրս, ինչպես նաև ընտանիքի, հարազատների և մտերիմների հետ:

3. դատապարտյալին ֆիզիկապես անկաշանդ տեղաշարժվելու իրավունքից զրկելը կամ այդ իրավունքի սահմանափակումը:

Կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի կիրառման դեպքում մեղքի քավումը արտահայտվում է նաև մի շարք իրավասահմանափակումների մեջ, որոնք կրում է դատապարտյալը պատժի կրման ընթացքում: Ընդ որում՝ այդ իրավասահմանափակումների մեծ մասն ածանցվում է հասարակությունից դատապարտյալի մեկուսացման վաստից:

Ասվածից հետևություն, որ կալանքի դեպքում անձը կրում է որոշակի անձանական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ զրկանքներ և իրավունքների սահմանափակումներ:

Ազատության զրկմամբ զուգորդվող պատիճների կրման ընթացքում դատապարտյալը գրկում է մասնավորապես մի շարք սահմանադրական իրավունքներից՝ խաղաղ հավաքներ, հանրահավաքներ, երթեր կազմակերպելու և դրանց մասնակցելու հնարավորությունից, պետության կառավարման գործընթացին մասնակցելու հնարավորությունից, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և փոստինուագրական հաղորդակցման գաղտնիության իրավունքից և այլն:

Ինչպես արդեն վերը նշեց, կալանքը բնութագրվում է բացառապես իրեն բնորոշ իրավական խիստ սահմանափակումներով: Այդ սահմանափակումները պայմանավորված են այն նպատակներով և խնդիրներով, որոնք օրենսդրություն է այս պատժատեսակի առջև, առանց որոնց վերջինս կորցնում է իր ինաստը: Բացի այդ պատժի այս տեսակի ժամկետի խիստ սահմանափակ բնույթը կոմպենսացվում է դրա խստությամբ և հեռացնում է այն բացասական երևությունը, որոնք բնորոշ են հանցագործություն կատարած անձին հասարակությունից ավելի երկարատև ժամանակով մեկուսացմանը:

Կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի ուսումնափրության ընթացքում մշտապես

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հարց է ծագում՝ արդյոք կալանքը ազատազրկման տեսակ չի հանդիսանում, և կալանքի կրման վայրը արդյոք ազատազրկման վայր չէ:

Ինչպես իրավացիորեն նշում է Վ.Վ.Չակովսկը, կալանքը՝ որպես քրեական պատիժ, իրենից ներկայացնում է ազատազրկման տեսակներից մեկը՝ պատժի համակարգում ընդգրած որոշակի ժամկետով ազատազրկման և ցմահ ազատազրկման հետ մեկտեղ: Այն հանդիսանում է կարճաժամկետ ազատազրկում, որը բնութագրվում է միայն իրեն բնորոշ պատժի կրման պայմաններով:

Անհրաժեշտ է ընդգծել, որ կարճաժամկետ ազատազրկմանը բնորոշ են բոլոր այն թերությունները, որոնք բնորոշ են ազատազրկմանն ընդհանրապես:

Այդպիսիք են օրինակ՝ անձի դուրս մղումը իր համար սովորական դարձած սոցիալական կապերից. Այուրական վճառն է, պատժի կրումից ազատվելուց հետո աշխատանքային զրադարձություն ապահովելու խնդիրն է և այլն:

Կարճաժամկետ ազատազարկման նպատակները հստակեցվում են ինչպես ելեւով դատապարտյալների տեսակից, այնպես էլ նրանց կողմից կատարված հանցագործության բնույթից:

Հարկ է նշել, որ այսօր քրեական իրավունքի գիտության մեջ հեղինակների և գիտնականների մեծ մասն արդեն խսկ կալանքը դիտարկում է որպես ազատազրկման տարատեսակ:

Այսպես, Պ.Գ.Պանոնարյովի կարծիքով, կալանքը ազատազրկման կարճաժամկետ տարատեսակն է, որը զուգորդվում է դատապարտյալին հասարակությունից խիստ մեկուսացման հետ:

Ս.Ն.Ստանովսկին գտնում է, որ իր իրավական բնույթով, կալանքը հանդիսանում է ազատազրկման տարատեսակներից մեկը⁷:

Մեղքի քավման չափը, որը բնորոշ է կալանքին, կապված է պատժի տվյալ տեսակի տևողության հետ, այլ ոչ թե պատժի ժամկետի հետ:

Կալանքի դատապարտված անձանց իրավունքների սահմանափակումը արտահայտվում է նաև նրանում, որ այն անձի մոտ առաջ է բե-

րում դատվածություն:

Դատվածությունը և դրանից բխող իրավասահմանափակումներն ու իրավական հետևանքները որոշակի անհարմարություններ են առաջ բերում այն ունեցող անձի համար, ուսնահարում են նրա շահերը:

Կալանքի դատապարտված անձանց իրավունքների և օրինական շահերի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ կալանքի ձևով քրեական պատժի բովանդակությունը կայանում է հետևյալում:

1. պետության կողմից անձի վարքագծի ակնհայտ բացասական գնահատման մեջ,

2. դատապարտյալին հասարակությունից խիստ մեկուսացման մեջ,

3. տարաբնույթ զրկանքների մեջ, որոնք կրում է կալանքի դատապարտված անձը:

4. կենցաղային բնույթի սահմանափակումների մեջ, որոնք անխուսափելիորեն կրում է քրեակատարողական հիմնարկում գտնվող անձը,

5. կալանքի ձևով պատժի շարունակական բնույթի մեջ,

6. դատվածության առկայության մեջ և այլն:

Վերլուծելով տեսական գրականության մեջ տեղ գտած տեսակետները՝ կարելի է հստակ հետևություն անել այն մասին, որ կալանքի կիրառումը նպատակահարմար է հետևյալ իրավիճակներում. հանցագործի անձը բնութագրվում է բացասական, սակայն նա քրեակատարողական հիմնարկում պատժի կրելու «փորձ» չունի, այդ իսկ պատճառով կալանքի ձևով պատժի կրման ընթացքում անձի նկատմամբ կիրառվող ներգործության կարճաժամկետ, սակայն միաժամանակ ինտենսիվ բնույթն ունակ է ապահովելու հատուկ նախագործացման նպատակը. անձի նկատմամբ նախկինում կիրառվել է հասարակությունից մեկուսացման հետ կապված պատժ, սակայն այն հովվածի սանկցիայով, որը տվյալ պահին մեղսագրվում է հանցագործություն կատարած անձին, կալանքից ավելի խիստ պատժատեսակներ նախատեսված չեն:

¹ Ст. Уголовное право Российской Федерации. Общая часть: Учебник. Под ред. проф. Б.В. Здравомыслова, Изд. 2-е, перераб. и доп., Москва, Юристъ, 1999. С. 355:

² Ст. նույն տեղում էջ 355:

³ Ст. Поливцов А. В. Правовое регулирование применения ареста как вида уголовного наказания: Дисс... канд. юрид. наук. - Ростов-на-Дону, 2001. С. 76:

⁴ Ст. Кудрявцев В. Н. Стратегии борьбы с преступностью. - М.: Юристъ, 2003. С. 67:

⁵ Ст. Яковлев В. В. Уголовно-правовая характеристика ареста (теоретический аспект): Дисс... канд. юрид. наук. Санкт-Петербург, 1999. С. 76:

ԱՐԴԻՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

⁶ Ст. 1 Российское уголовное право: В 2 т. Т.1: Общая часть / Под ред. проф. Л. В. Иногамовой-Хегай, проф. В.С. Комисарова, проф. А. И. Парога. - М.: ИНФРА-М, 2003. С. 445:

⁷ Ст. 1 Становский М. Н. Назначение наказания. - СПб.: Юридический центр Пресс, 1999. С. 110:

РЕЗЮМЕ

Правовая сущность ареста по действующему уголовному законодательству

В статье выявляется сущность ареста как одной из строгих мер наказания, которая назначается за совершение преступлений и средней, и небольшой тяжести сроком от 15 дней до трех месяцев.

SUMMARY

Legal matter of arrest according to applicable criminal legislation

In this article arrest is revealed as one of the most strict kinds of punishment which is set both for middle level dangerous and not big level dangerous crimes, with 15 days duration.